ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Սպառողների պաշտպանության կայուն և զարգացած համակարգի ձևավորումը բխում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից: Մասնավորապես՝ սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությունը և ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը էական նշանակություն ունի բարեխիղճ տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման և ընդհանուր առմամբ տնտեսության զարգացման համար:

Սույն դեպքում սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտը կարգավորող հիմնական օրենքը «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքն է, որն ընդունվել է 2001 թվականի հունվարի 1-ին և մինչ օրս ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների: Չնայած «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում իրականացված մի քանի փոփոխությունների՝ այն ունի դեռևս զգալի բարեփոխման կարիք, ինչը մի կողմից պայմանավորված է իրավական բացերի առկայությամբ և առկա կարգավորումների անկատարություններով, որոնց լուծումն ունի առանցքային նշանակություն սպառողների արդյունավետ պաշտպանության ապահովման համար, մյուս կողմից ուղղակիորեն կապված է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների հետ:

Սպառողների պաշտպանության արդյունավետ գործող համակարգի ստեղծման համար առաջնային է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որպես սպառողների շահերի հանրային պաշտպանություն իրականացնող կենտրոնական մարմնի լիազորությունների և վերջինիս կողմից սպառողների շահերի դեմ ուղղված անարդար գործելակերպի դեպքում վարույթ հարուցելու և պատասխանատվության միջոց կիրառելու լիազորությունների հստակեցումը:

Այս համատեքստում հատկանշական է, որ ԵՄ լավագույն փորձին սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի շարունակական մոտարկման նպատակով իրականացվել է «Սպառողների շահերի պաշտպանության համակարգը» տեխնիկական աջակցության ծրագիրը, որի շրջանակում ներկայացվել է ԵՄ սպառողների

իրավունքների պաշտպանության օրենսդրության հետ ներդաշնակեցման մակարդակը գնահատող հաշվետվությունը, որով առաջարկվել է սպառողների շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրման ճանապարհային քարտեզ:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) 14-րդ գլխով կարգավորվում է սպառողների պաշտպանության ոլորտում համագործակցության առանձնահատկությունները: Համաձայնագրի 81-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը պետք է համագործակցեն սպառողների պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու և սպառողների պաշտպանության իրենց համակարգերի միջև համաձայնեցվածության հասնելու համար, իսկ 83-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր օրենսդրության մոտարկումը Եվրոպական միության ակտերին և VI հավելվածում նշված միջազգային փաստաթղթերին՝ այդ հավելվածի դրույթներին համապատասխան:

Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» թիվ 666–Լ որոշման հավելվածի 5-րդ բաժնի 14-րդ գլխով սահմանված է սպառողների պաշտպանության շրջանակում մոտարկման ենթակա իրավական ակտերը, որոնց թվում են՝

1. Թիվ 2006/2004 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 2017/2394 կանոնակարգը (ԵՀ)՝ սպառողների պաշտպանության մասին օրենքների կատարման համար պատասխանատու ներպետական մարմինների միջև համագործակցության մասին.

2. Թիվ 2009/22/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 2020/1828 հրահանգը սպառողների հավաքական շահերի պաշտպանության ներկայացուցչական գործողությունների մասին.

3. Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ հրահանգ՝ ներքին շուկայում սպառողների նկատմամբ ձեռնարկությունների անարդար առևտրային գործելակերպի մասին.

4. Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի թիվ 98/6/ԵՀ հրահանգը սպառողներին առաջարկվող ապրանքների գնանշման մասին:

Ողջ վերոգրյալը հաշվի առնելով՝ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան սահմանելու սպառողների պաշտպանության արդյունավետ համակարգի կայացման շրջանակում առկա առանցքային նշանակություն ունեցող մի շարք հիմնահարցերի լուծմանն ուղղված կարգավորումներ, որոնց շարքում, ի թիվս այլնի, հիշատակման են արժանի հետևյալները.

1) Սպառողների շահերի պաշտպանության կենտրոնական մարմնի հստակեցում՝ սպառողների շահերի պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ 2020/1828 հրահանգով սահմանված կարգավորումներին համապատասխան.

Ներկայումս առկա չէ սպառողների կոլեկտիվ շահերի դեմ ուղղված վարքագծից հանրային պաշտպանության արդյունավետ գործիքակազմ, որի շրջանակում առաջնահերթ է այն կենտրոնական մարմնի և վերջինիս լիազորությունների հստակեցումը, որը ապահովելու է սպառողների պաշտպանության դեմ ուղղված իրավախախտումների դեպքում պատասխանատվություն և ապահովելու է դրա կիրառումը:

Միևնույն ժամանակ, բացակայում են կարգավորումներ սպառողների պաշտպանության ոլորտում համագործակցության միասնական մոտեցման վերաբերյալ և առկա չէ կենտրոնական համակարգող մարմին, որի միջոցով իրականացվելու է տեղեկատվության փոխանակման, հաղորդակցության և ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

ԵՄ օրենսդրությամբ սպառողների հավաքական շահերի պաշտպանության մեխանիզմի վարչահիրավական մեխանիզմի վերաբերյալ կարգավորումներ սահմանված են 2009/22/EC հրահանգով, որը, ի թիվս այլնի, պարտավորեցնում է անդամ պետություններին ունենալ սպառողների հավաքական շահերի պաշտպանության վարչահիրավական կամ դատական մեխանիզմներ:

2009/22/EC հրահանգի նպատակն էր սահմանել կանոններ, որոնք կերաշխավորեն արդյունավետ մեխանիզմներ սպառողների հավաքական շահերին վնասող խախտումները դադարեցնելու համար: 2009/22/EC հրահանգով սահմանված կարգավորումների հիմնական նպատակը խախտման վերացումն է և հաստատումը, որ խախտում է տեղի ունեցել, իսկ խախտումը արձանագրող հիմնական միջոցներն են որոշման կայացումն ու հրապարակումը, իրավախախտի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառումը: 2009/22/EC հրահանգը էական է սպառողների պաշտպանության ամրապնդման գործում՝ առաջարկելով սպառողների շահերի դեմ ոտնձգությունների դեմ պայքարի և կանխարգելման հստակ շրջանակ:

Հարկ է շեշտել, որ 2009/22/EC հրահանգը ուժը կորցրած է ճանաչվել 2020 թվականի նոյեմբերի 25-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2020/1828 սպառողների հավաքական շահերի պաշտպանության համար ներկայացուցչական գործողությունների մասին հրահանգով: **Անհրաժեշտ է ընդգծել, որ 2020/1828 հրահանգը որևէ կերպ չի սահմանափակում սպառողների հավաքական շահերի պաշտպանության ընթացակարգային միջոցները ազգային մակարդակում**: 2020/1828 հրահանգի ընդունման հիմնավորումից հետևում է, որ անհրաժեշտ է առնվազն մեկ ընթացակարգային մեխանիզմ, որը թույլ է տալիս որակավորված սուբյեկտներին ներկայացնել ներկայացուցչական հայցեր և՛ խախտման արձանագրման, և՛ փոխհատուցման միջոցների ստացման նպատակով:

2020/1828 հրահանգով կատարված փոփոխություններից մեկը կոլեկտիվ փոխհատուցման մեխանիզմների ընդլայնված շրջանակն է: Ի տարբերություն իր նախորդի, որն առաջին հերթին նախատեսում էր իրավախախտում կազմող գործողությունների դադարեցմանն ուղղված միջոցներ, նոր հրահանգը թույլ է տալիս որակավորված սուբյեկտներին ներկայացնել սպառողներին փոխհատուցում ստանալու հայցերով: Միաժամանակ, 2020/1828 հրահանգով ավելի մեծ ուշադրություն է դարձվում ԵՄ-ում անդրսահմանային ներկայացուցչական գործողությունների հեշտացմանը՝ սահմանելով պետությունների միջև համագործակցության լայն շրջանակ՝ մեկից ավելի անդամ երկրներում սպառողների վրա ազդեցություն ունեցող գործողությունների վերահսկման հարցում: 2020/1828 Հրահանգը սահմանում է նաև դատավարական երաշխիքներ և ներկայացուցչական հայցեր հարուցելու պայմաններ:

2020/1828 հրահանգով սահմանված փոխհատուցման մեխանիզմների առնչությամբ հարկ է նշել, որ 2020/1828 հրահանգով սահմանված կարգավորումները փոխկապակցված են 2013 թվականի հունիսի 11-ի 2013/396/EU հանձնարարականի հետ, որը իր հերթին, առանցքային դեր է խաղում հավաքական փոխհատուցման մեխանիզմների ձևավորման գործում: Այս առումով հարկ է շեշտել, որ վերաբերելի կարգավորումներ սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որի «Խմբային հայցի հիման վրա քննվող գործերի վարույթը» վերտառությամբ 26-րդ գլխով սահմանված է նաև իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից խմբային հայց ներկայացնելու կարգը:

Նախագծով 2009/22/EC հրահանգով և դրան հաջորդող 2020/1828 հրահանգով սահմանված կարգավորումների հաշվառմամբ՝ սահմանվել է.

1. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իրավասությունը որպես սպառողների հավաքական շահերի պաշտպանություն իրականացնող կենտրոնական մարմին.

2. սահմանվել է սպառողների հավաքական շահերի խախտման վերաբերյալ վարույթի ընթացակարգի առանձնահատկությունները:

Միաժամանակ, 2020/1828 հրահանգի մասով հարկ է շեշտել, որ վերջինիս մոտարկման համար Կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 666-Լ որոշման հավելված 1-ով հաստատված Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզով որպես վերջնաժամկետ է սահմանված 2026 թվականի 1-ին եռամսյակը: Վերոնշյալի հաշվառմամբ՝ հիմք ընդունելով սպառողների հավաքական շահերի պաշտպանության կենտրոնական մարմնի ստեղծման հրամայականը և ԵՄ փորձագետների հետ իրականացված «Սպառողների շահերի պաշտպանության համակարգը» տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում ձևավորված առաջարկների տրամաբանությունը, Նախագծով որդեգրվել է 2020/1828 հրահանգի փուլային մոտարկման մոտեցումը:

2) Սպառողների շահերի պաշտպանության կոնտակտային մարմնի հստակեցում՝ սպառողների պաշտպանության մասին օրենքների կատարման համար պատասխանատու ներպետական մարմինների միջև համագործակցության

մասին 2017/2394 կանոնակարգով սահմանված կարգավորումներին համապատասխան.

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 27-ի 2006/2004 կանոնակարգ նպատակն էր զարգացնել համագործակցությունը տարբեր անդամ պետություններում սպառողների իրավունքների պաշտպանությունն ապահովող մարմինների, ինչպես նաև վերջիններիս և Եվրոպական հանձնաժողովի հետ՝ ապահովելու ԵՄ-ում սպառողների իրավունքների պաշտպանության միասնական մոտեցումներ: 2006/2004 կանոնակարգի ընդունման անհրաժեշտության համատեքստում կարևորվում էր սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության արդյունավետ կիրարկման շրջանակում համագործակցությունը անդրսահմանային մակարդակում:

2006/2004 կանոնակարգով սահմանվում են անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության օրենքների կիրարկման համար պատասխանատու մարմինների համագործակցության պայմանները: 2006/2004 կանոնակարգով, ի թիվս այլնի, նախատեսված էին նաև իրավասու մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և հարկադիր գործողությունների, ինչպես նաև համագործակցության ընթացքում ստացված տեղեկատվության պահպանման և մշակման համար էլեկտրոնային տվյալների բազայի վերաբերյալ դրույթներ:

2006/2004 կանոնակարգը ուժը կորցրած է ճանաչվել Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի 2017/2394 կանոնակարգով, որի նպատակն է պաշտպանել սպառողներին ԵՄ սպառողական իրավունքի անդրսահմանային խախտումներից՝ արդիականացնելով ԵՄ, Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏԱ) և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (ԵԱԱԱ) երկրների համապատասխան ազգային մարմինների համագործակցությունը միմյանց միջև և Եվրոպական հանձնաժողովի հետ:

Նախագծով 2017/2394 կանոնակարգով և դրան նախորդող 2006/2004 կանոնակարգով սահմանված վերաբերելի կարգավորումների հաշվառմամբ՝ ամրագրվում է Հանձնաժողովի՝ սպառողների պաշտպանության կոնտակտային մարմնի լիազորությունը՝ նպատակ ունենալով, ի թիվս այլնի, հեշտացնել հաղորդակցությունն ու համագործակցությունը սպառողների պաշտպանության համար պատասխանատու այլ մարմինների և միջազգային գործընկերների հետ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ սպառողների շահերի պաշտպանության գործառույթը արդյունավետ իրականացվում է մրցակցության և սպառողների պաշտպանության միասնական գործառույթ իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինների կողմից: Նշված դուալ մոդելը գործում է Լեհաստանի Հանրապետությունում[1], Ֆինլանդիայի Դեմոկրատական Հանրապետություն[2], Վրաստանի Հանրապետությունում[3], Ֆրանսիայի Հանրապետությունում[4], Իռլանդիայի Հանրապետությունում[5], Նիդերլանդների Թագավորությունում[6], Մալթայի Հանրապետության[7] և այլ պետություններում:

3) Սպառողների դեմ ուղղված անարդար առևտրային գործելակերպի և սպառողների դեմ ուղղված այլ իրավախախտումների և դրանց համար պատասխանատվության սահմանում 2005/29/EC հրահանգով սահմանված կարգավորումներին համապատասխան.

Ներկայումս «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքը չի նախատեսում կարգավորումներ սպառողների դեմ տնտեսավարող սուբյեկտների մոլորեցնող և ագրեսիվ գործելակերպի վերաբերյալ, ինչպես նաև նման գործելակերպից անհատական և վարչական պաշտպանության մեխանիզմներ: Անարդար առևտրային գործելակերպից սպառողների պաշտպանությունը հիմնաքարային նշանակություն ունի սպառողների ազատ ընտրության և ձեռքբերման որոշում կայացնելու վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման առումով: Մինչդեռ գործող կարգավորումներով նախատեսված չեն տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը, գործողությունները կամ անգործությունը ագրեսիվ առևտրային գործելակերպի ընդհանուր բնութագիրը կամ դրանց առավել կանխատեսելի դրսևորումները:

Հարկ է նշել, որ Նախագծով առաջարկվող կարգավորումների շրջանակում անբարեխիղճ մրցակցության հասարակության մոլորեցման դրսևորումը ամրագրվել է սպառողների դեմ ուղղված առևտրային գործելակերպը սահմանող դրույթներում, քանի որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»

---

[1] Տես՝ https://uokik.gov.pl/en
[2] Տես՝ https://www.kkv.fi/en/
[3] Տես՝ https://gcca.gov.ge/index.php?m=2&lng=geo
[4] Տես՝ https://www.autoritedelaconcurrence.fr/en/missions
[5] Տես՝ https://www.ccpc.ie/
[6] Տես՝ https://www.acm.nl/en/about-acm/our-organization/the-netherlands-authority-for-consumers-and-markets
[7] Տես՝ https://www.mccaa.org.mt/

օրենքի «հասարակության մոլորեցումը» վերտառությամբ 21-րդ հոդվածով սահմանված իրավախախտումը երկօբյեկտ է՝ ուղղված և՛ մրցակից տնտեսավարող սուբյեկտների, և՛ սպառողների շահերի դեմ, իսկ ԵՄ օրենսդրությամբ վերջինս դիտարկվում է սպառողների դեմ ուղղված իրավախախտումները սահմանող կարգավորումներում, միաժամանակ թիրախում ունենալով մրցակցության պաշտպանությունը: Ընդ որում, քննարկվող օրենսդրական փաթեթի ընդունման դեպքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի սահուն կիրառումը ապահովելու անհրաժեշտությունից ելնելով նպատակահարմար է մինչև դրա ուժի մեջ մտնելն առկա վարույթներն իրականացնել և պատասխանատվության միջոցները կիրառել այս պահին գործող օրենքով:

Գործող կարգավորումներով սահմանված չէ նաև սպառողների իրավունքների պաշտպանության շրջանակում հիմնարար նշանակություն ունեցող սպառողի ազատ ընտրության իրավունքը:

Հարկ է նշել, որ վկայակոչված կարգավորումները սահմանված են ԵՄ օրենսդրությամբ և ԵՄ պետությունների ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ 2005/29/EC հրահանգով սահմանված է ինչպես սպառողների դեմ անարդար առևտրային պրակտիկայի հիմնական հատկանիշները, այնպես էլ ագրեսիվ և մոլորեցնող առևտրային պրակտիկայի առավել մասնավոր դրսևորումները, որոնց լիարժեք մոտարկումը առանցքային է սպառողների շահերի գործուն համակարգի ձևավորման առումով:

ԵՄ անդամ բոլոր պետություններում սահմանված են սպառողների դեմ առևտրային պրակտիկան արգելող հրահանգին համահունչ կարգավորումներ:

Ֆինլանդիայի Դեմոկրատական Հանրապետությունում 2005/29/EC հրահանգին համապատասխան կարգավորումները հիմնականում արտացոլված են «Անարդար բիզնես պրակտիկայի մասին» օրենքում, որով սահմանված են մոլորեցնող և ագրեսիվ վարքագծի արգելքի և դրա արդյունքում ծագող պատասխանատվության վերաբերյալ դրույթներ[8]:

Մասնավորապես՝ նշված կարգավորումներով անարդար առևտրային գործելակերպ է համարվում ցանկացած վարքագիծը, որը

[8] Տես՝ https://e-justice.europa.eu/37165/EN/enforcement?FINLAND&member=1

1. հակասում է համընդհանուր ընդունված գործարար շրջանառության սովորույթներին.

2. կարող է ակնհայտորեն խաթարել սպառողի՝ գնման վերաբերյալ տեղեկացված որոշում կայացնելու կամ սպառողական ապրանքի կամ ծառայության հետ կապված այլ տեղեկացված որոշում կայացնելու կարողությունը և հանգեցնել նրան, որ սպառողը կայացնի որոշում, որը չէր կայացնի այլ պարագայում:

Բացի այդ սահմանված են այն դրսևորումները, որոնք բոլոր դեպքերում համարվում են սպառողի դեմ ուղղված անարդար գործելակերպ, որոնց թվում են կեղծ կամ մոլորեցնող տեղեկատվության տրամադրումը և ագրեսիվ գործելակերպը.

Կեղծ կամ մոլորեցնող տեղեկատվությունը, ի թիվս այլնի, կարող է վերաբերել.

ա) ապրանքի կամ ծառայության առկայությանը, հասանելիությանը, տեսակին, որակին, քանակին կամ այլ հիմնական բնութագրերին.

բ) արտադրության ծագմանը, ստեղծման մեթոդին և ամսաթվին, օգտագործմանը և օգտագործման հետևանքներին կամ սպառողական ապրանքի կամ ծառայության իրականացված փորձարկման արդյունքներին.

գ) սպառողական ապրանքի կամ ծառայության գինը կամ դրա որոշման չափանիշներին կամ որոշակի գնային առավելության առկայությանը, կամ վճարման պայմաններին.

դ) սպառողական ապրանքի կամ ծառայության առաքման ժամանակին և մատուցման այլ պայմաններին.

ե) պայմանագրի կնքումից հետո վաճառքի, հաճախորդների սպասարկման պրակտիկայի բնույթին և հաճախորդների բողոքների քննությանը.

Ագրեսիվ գործելակերպը ուղղակիորեն արգելված է սպառող-տնտեսավարող սուբյեկտ առևտրային հարաբերություններում: Մասնավորապես՝ ագրեսիվ է համարվում սպառողի նկատմամբ հետապնդումը, հարկադրանքը կամ ցանկացած այլ կերպ ճնշում գործադրելը, որը կարող է հանգեցնել սպառողի կողմից գնման որոշման կամ սպառողական ապրանքի կամ ծառայության հետ կապված այլ որոշման կայացմանը, որը սպառողը չէր կայացնի առանց դրա:

Գործելակերպը որպես ագրեսիվ գնահատելիս, ի թիվս այլնի, հաշվի է առնվում՝

ա) ժամանակը, տեղը, բնույթը և տևողությունը.

բ) սպառնալից կամ վիրավորական արտահայտությունների կամ վարքագծի օգտագործումը.

գ) սպառողի դժբախտության կամ այլ նմանօրինակ անձնական բնույթի հանգամանքների օգտագործումը, որը ազդում է սպառողի ողջամիտ դատողության վրա.

դ) պայմանագրին կամ օրենքին համապատասխան սպառողի իրավունքների իրականացմանը խոչընդոտելը.

ե) ցանկացած գործողություն ձեռնարկելու սպառնալիքը, որը չի կարող օրենքով ձեռնարկվել:

Այսինքն՝ Ֆինլանդիայում գործող «Սպառողների պաշտպանության մասին» օրենքով սպառողի դեմ անարդար առևտրային պրակտիկայի դրսևորումները նույնանում են 2005/29/ԵՀ հրահանգով սահմանված ցանկին, ավելին «Սպառողների պաշտպանության մասին» օրենքը ընդգրկում է անարդար առևտրային պրակտիկայի առավել լայն դրսևորումներ:

Լեհաստանի Հանրապետությունում նույնպես արգելված է անարդար առևտրային գործելակերպը, որի վերաբերյալ հիմնական կարգավորումները սահմանված են «Անարդար առևտրային պրակտիկայի դեմ պայքարի մասին» օրենքում[9]: Ընդ որում, այն հիմնականում արտացոլում է 2005/29/EC հրահանգի դրույթները ուղղակիորեն կամ աննշան փոփոխություններով:

Հարկ է նկատել, որ անարդար գործելակերպի առկայությունը գնահատում և դրա համար պատասխանատվության միջոցներ կիրառվում է Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության գրասենյակի (UOKIK) նախագահի կողմից՝ սպառողների կոլեկտիվ շահերի առկայության դեպքում: Ընդ որում, կոլեկտիվ սպառողների շահերը չի ներառում սպառողների անհատական շահերի հանրագումարը (օրինակ՝ 100 հաճախորդներ, որոնց վնաս է հասցվել անշարժ գույքի կառուցապատողի կողմից): Կոլեկտիվ շահ առկա է միայն այն դեպքում, երբ վնասվում են պոտենցիալ անսահմանափակ թվով սպառողների շահերը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ մրցակցության և սպառողների իրավունքների պաշտպանության գրասենյակի նախագահի կողմից վարույթ է հարուցվում միայն սպառողների կոլեկտիվ շահերը շոշափող առավել կարևոր գործերով:

[9] Տես՝ https://konsument.gov.pl/wp-content/uploads/bart-baza-wiedzy-ochrona-kon-eng/zalacznik-2.pdf

Իռլանդիայի Հանրապետությունում անարդար առևտրային գործելակերպը արգելող 2005/29/EC հրահանգի հիմնական դրույթները արտացոլված են «Սպառողների պաշտպանության մասին» օրենքում[10], որով սահմանված է անարդար առևտրային պրակտիկայի ընդհանուր բնութագիրը, դրա մասնավոր դրսևորումները և արդյունքում ծագող պատասխանատվությունը:

Դանիայի Թագավորության կողմից 2005/29/EC հրահանգի կարգավորումները սահմանվել են «Սպառողների պաշտպանության մասին» օրենքում[11], որում ամրագրված է մոլորեցնող վարքագծի արգելքը:

3) Գնանշման կանոնների և դրա խախտման համար պատասխանատվության սահմանում 98/6/EC հրահանգով սահմանված կարգավորումներին համապատասխան.

Տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված չէ վաճառվող ապրանքի համար բնորոշ մեկ միավորի գնի ցուցադրման պարտադիր պահանջ, բացի այդ առկա չեն կարգավորումներ փաթեթավորմամբ վաճառվող ապրանքների դեպքում ապրանքի գնի հետ միասին նաև փաթեթվածքի մեջ առկա ապրանքի մեկ միավորի գնի ցուցադրման վերաբերյալ: Մինչդեռ նման պայմաններում սահմանափակվում է սպառողի ամբողջական տեղեկատվության հիման վրա ձեռքբերման որոշում կայացնելու հնարավորությունը:

Հարկ է նշել, որ Ապրանքների գնանշման վերաբերյալ հրահանգի դրույթները արտացոլված են ԵՄ անդամ պետությունների ներպետական օրենսդրությամբ, որոնցով սահմանված են նաև հատուկ մեխանիզմներ գնանշման կանոնների խախտումները կանխելու կամ դրանք արագ վերացնելու վերաբերյալ:

Ֆինլանդիայի Դեմոկրատական Հանրապետությունում գնանշման կանոնները սահմանված են «Սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքով[12], ինչպես նաև «շուկայավարման սպառողական ապրանքների գների ծանուցման մասին» կանոնակարգով (553/2013)[13] և «մարքեթինգային նպատակներով սպառողական ապրանքների գինը հայտարարելու մասին» կանոնակարգով (1359/1999)[14], որոնցով սահմանված են միավոր գնի ներկայացման կանոնները, այդ կանոններից սահմանված բացառությունները, առանձին ապրանքների համար

[10]Տես՝ https://www.irishstatutebook.ie/eli/2007/act/19/enacted/en/html
[11] Տես՝ https://www.retsinformation.dk/eli/lta/2017/426
[12] Տես՝ Microsoft Word - OM_38_1978_Kuluttajansuojalaki_muutokset_740_2022_EN.docx (finlex.fi)
[13] Տես՝ https://www.finlex.fi/fi/laki/alkup/2013/20130553
[14]Տես՝ https://www.finlex.fi/fi/laki/alkup/1999/19991359

սահմանված հատուկ կարգավորումները և նշված կանոնների խախտման հետևանքով ծագող պատասխանատվությունը:

Նշված կարգավորումներով, ի թիվս այլնի, սահմանվում է.

ա) եթե անհատական սպառողական ապրանքը առաջարկվում է որոշակի գնով, ապա վաճառողը պետք է նշի ապրանքի ընդհանուր գինը, ներառյալ՝ հարկերը, կամ, եթե ապրանքի բնույթի պատճառով ճշգրիտ գինը չի կարող նշվել, ապա գինը որոշելու հիմքը.

բ) անհրաժեշտության դեպքում նշում առաքման ծախսերի մասին, որոնք ներառված չեն ընդհանուր արժեքի մեջ, իսկ եթե այդ ծախսերը հնարավոր չէ նախապես հաշվարկել, ապա պետք է նշվի, որ այդպիսի ծախսեր կարող են առաջանալ.

գ) զեղչին զուգահեռ պետք է նաև նշվի ամենացածր գինը, որով ապրանքը վաճառվել է գնի իջեցմանը նախորդող 30 օրվա ընթացքում, իսկ եթե մինչև 60 օր տևող ակցիայի ընթացքում գների իջեցումն աստիճանաբար աճում է, ապա կարող է նշվել ամենացածր գինը, որով ապրանքը վաճառվել է առաջին գնին նախորդող 30 օրվա ընթացքում: Նշված պահանջները չեն տարածվում արագ փչացող սննդամթերքի վրա:

դ) վաճառքի գինը ապրանքների կամ ծառայությունների, այլ սպառողական ապրանքների կամ օգուտների դիմաց գանձվող վերջնական հարկվող գինն է ներառյալ ապրանքների համար կիրառվող հարկերը.

ե) ապրանքի միավորի գինը ապրանքի վերջնական հարկվող գինն է մեկ միավորի քաշի, ծավալի կամ երկարության համար և չի ներառում ապրանքի համար գանձվող կանխավճարները.

զ) ապրանքի միավորի գնի հիման վրա սպառողը կարող է համեմատել տարբեր չափերի փաթեթներ: Եթե մանրածախ վաճառողը հայտարարում է ապրաքնի վաճառքի գինը, ապա դրա միավորի գինը պետք է հայտարարվի միաժամանակ (ընդ որում սպառողի համար պարզ, միանշանակ և հեշտությամբ հասկանալի և ընկալելի ձևով).

է) միավորի գինը հաշվարկվում է փաթեթի զուտ պարունակության քաշի կամ ծավալի հիման վրա: Այնուամենայնիվ, եթե պինդ սնունդը վաճառվում է այնպիսի հեղուկի մեջ, որը նախատեսված չէ ուտելու համար, որպես հիմք ընդունվում է մաքուր պարունակության քաշը՝ հանած այդ հեղուկի քաշը.

ը) այն դեպքում, երբ վաճառքի ճշգրիտ գները հնարավոր չէ ներկայացնել, ապա անհրաժեշտ է տրամադրել տեղեկատվություն, որի հիման վրա որոշվում են

վաճառքի գները: Գնացուցակը պետք է հեշտությամբ տեսանելի լինի սպառողին և, հնարավորության դեպքում, նաև տեսանելի լինի հիմնական տնտեսական գործունեության տարածքից դուրս: Եթե ծառայություններն առաջարկվում կամ իրականացվում են նաև առևտրային տարածքից դուրս այլ վայրում, ապա գնացուցակը պետք է տրամադրվի ըստ պահանջի: Իսկ այն դեպքում, երբ հնարավոր չէ բոլոր գները ներառել գնացուցակում դրանց մեծ քանակի կամ որևէ այլ պատճառով, ապա ամենատարածված ծառայությունների գները պետք է ներառվեն գնացուցակում և ամբողջական գնացուցակի մասին տեղեկատվությունը պետք է սպառողին տրամադրվի ըստ պահանջի.

թ) ապրանքի միավորի գինը նշելու պահանջից բացառություններ, օրինակ՝ պահանջը չի տարածվում 50 գրամից պակաս քաշ ունեցող կամ 50 միլիլիտրից պակաս ծավալ ունեցող նախափաթեթավորված ապրանքների համար և թարմ և պահածոյացված բանջարեղենի համար.

ժ) առանձին ապրանքների, ինչպիսիք են օրինակ՝ ավիատոմսերը, պատրաստի ուղևորությունների փաթեթները, բնակարանները, վճարային ծառայությունները, տաքսի ծառայությունները, ծխախոտի արտադրանքը, ալկոհոլի և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները կարգավորվում են գների ծանուցման վկայակոչված ընդհանուր կանոններից տարբերվող գների ծանուցման հատուկ օրենսդրությամբ:

Գերմանիայի Դաշնության գործող գնանշման կանոնների[15] համաձայն՝ գների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է համապատասխանի ընդհանուր առևտրային պատկերացումներին և գների հստակության և հուսալիության սկզբունքներին և տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են նաև նշել վաճառքի կամ միավորի գինը: Միաժամանակ, եթե վաճառողը սպառողներին ապրանքներ է առաջարկում նախափաթեթավորմամբ, բաց փաթեթավորմամբ կամ որպես առևտրային միավորներ՝ առանց քաշի, ծավալի, երկարության կամ փաթեթավորման, կամ ով գովազդում է այդ ապրանքները՝ նշելով գները, ապա վերջինս ի լրումն ընդհանուր գնի՝ պետք է նաև հստակ, ճանաչելի և հեշտ ընթեռնելի ձևով նշի բազային գինը: Բազային գինը կարող է չնշվել, եթե այն համընկնում է ընդհանուր գնի հետ, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ կոնկրետ դեպքերում:

[15]Տես՝ https://www.gesetze-im-internet.de/pangv_2022/BJNR492110021.html

Իռլանդիայի Հանրապետությունում ապրանքների գնանշման վերաբերյալ 98/6/EC հրահանգի հիմնական դրույթները արտացոլված են «Ապրանքների գնանշման պահանջների մասին» թիվ 639 որոշմամբ[16]: Դրանով ուղղակիորեն սահմանվում է, որ վաճառողը պետք է ապահովի, որ ապրանքի վաճառքի գնի և ապրանքի միավորի գնի նշումը լինի ոչ երկիմաստ, հեշտությամբ ճանաչելի որպես տվյալ ապրանքի համար սահմանված, հստակ տեսանելի և ընթեռնելի սպառողների համար:

Անհրաժեշտ է նկատել, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից նշված կանոններին պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Իռլանդիայի Մրցակցության և սպառողների պաշտպանության հանձնաժողովը, որը գնանշման կանոնների խախտման դեպքում իրավասու է սուբյեկտներին ուղարկել վճարման վերաբերյալ գրավոր ծանուցում (fixed payment notice)՝ առաջարկելով վերացնել խախտումը և 28 օրվա ընթացքում վճարել 300 եվրո և նկարագրված գործողությունները իրականացնելուց հրաժարվելու դեպքում սուբյեկտի նկատմամբ կարող է հարուցվել վարույթ:

4) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների մասով վարույթի առանձնահատկությունների սահմանում.

Հաշվի առնելով սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների առանձնահատկությունները անհրաժեշտ է սահմանել սպառողների դեմ ուղղված իրավախախտումների քննության հատուկ կարգավորումներ: Առավել ակնառու է Հանձնաժողովի կողմից տնտեսավարության սկզբունքի հաշվառմամբ նոր իրավական մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը ուղղված քիչ վարչարարական ռեսուրսների միջոցով խախտումների արագ ու արդյունավետ վերացման հասնելուն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սպառողների շահերի պաշտպանություն իրականացնող մարմինները կիրառում են իրավական այնպիսի մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս ավելի քիչ վարչարարության իրականացմամբ կանխել իրավախախտումները կամ հասնել դրանց վերացմանը: Այս առումով հատկապես հիշատակելի է գրավոր ծանուցման (fixed payment notice) և զգուշացման մեխանիզմները, որոնք արդյունավետ գործում են ինչպես ԵՄ անդամ պետություններում այնպես էլ այլ պետություններում:

[16] Տես՝ https://www.irishstatutebook.ie/eli/2002/si/639/made/en/print#

5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման և ձեռքբերման վերաբերյալ կարգավորումների կատարելագործում.

Ներկայումս առկա է գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերման հարաբերություններում գնորդի կողմից ուշ վճարման խնդրի կարգավորումների կատարելագործման անհրաժեշտություն: Մասնավորապես՝ նախատեսվում են կարգավորումներ պայմանագրային առավելություն ունեցող գյուղատնտեսական արտադրանք ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարման կետանցի դեպքում պայմանագրային կամ բազային տոկոսներ վճարելու պարտականություն: Նմանօրինակ կարգավորումներ նախատեսված են նաև առևտրային գործարքներում ուշ վճարումների վերաբերյալ 2011/7/EU հրահանգով:

6) Միջանկյալ միջոցներ կիրառելու հնարավորության սահմանում.

Հանձնաժողովի առջև դրված նպատակներն ու ստանձնած լիազորությունների իրականացումը շատ դեպքերում կարող է իմաստազրկվել Հանձնաժողովի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում միջանկյալ միջոցների կիրառման հնարավորության բացակայությամբ: Մասնավորապես՝ հասարակական հարաբերությունների արագ զարգացման և մրցակցության ու սպառողների պաշտպանություն իրականացնող մարմինների համար ծագող բազմաբևեռ մարտահրավերներին արագ արձագանքելը հաճախ անհնար է լինում պայմանավորված նշված մարմինների ռեսուրսներով, քննության իրականացման և գործի փաստական հանգամանքների բացահայտման ու ապացուցման բեռի բաշխման կանոնների առանձնահատկություններով: Նման պայմաններում գործող օրենսդրական կարգավորումներով սահմանափակված է մրցակցային ծանր իրավախախտումների դեպքում անվերականգնելի վնասի կանխման հնարավորությունը: Այնինչ միջանկյալ միջոցները էական նշանակություն ունեն հատկապես Հանձնաժողովի կանխարգելիչ գործառույթի իրականացման համար և շուկայում կամ սպառողների շահերին արդյունավետ պաշտպանության համար:

Միջանկյալ միջոցների կիրառման հնարավորությունը ուղղակիորեն սահմանված է 2002 թվականի դեկտեմբերի 1/2003 կանոնակարգի 8-րդ հոդվածով[17], համաձայն՝ մրցակցությանը լրջագույն և անվերականգնելի վնասի վտանգի հետևանքով առաջացած անհետաձգելի դեպքերում Հանձնաժողովը,

[17] Տես՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32003R0001

սեփական նախաձեռնությամբ, խախտումը առերևույթ prima facie հիմնավորող հանգամանքների վրա կիրառել միջանկյալ միջոցներ:

7) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք) մի շարք իրավական բացերի և տեխնիկական խնդիրների լուծում.

Օրենքում առկա են մի շարք իրավական բացեր և կարգավորումների որոշ անկատարություններ, որոնց առնչությամբ, ի թիվս այլնի, ներկայացվել են հետևյալ լուծումները.

ա) համակենտրոնացում չհամարվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների շրջանակի հստակեցում.

բ) չհայտարարագրված համակենտրոնացումների հիմքով հարուցված վարույթի իրականացման ժամկետի հստակեցում արագացված վարույթ կիրառելու դեպքում.

գ) Հանձնաժողովի կողմից ստուգում իրականացնելու ընթացակարգի հստակեցում.

դ) Հայտարարագրման ենթակա համակենտրոնացման գնահատման շրջանակում մասնակիցների կողմից հայտարարագրում կամ վարույթի ընթացքում կեղծ, ոչ հավաստի, ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ տեղեկատվություն ներկայացնելու կամ Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում դիմումն անհետևանք թողնելու վերաբերյալ որոշում կայացնելու.

ե) հայտարարագրման ենթակա համակենտրոնացումն արգելելու հիմքերի հստակեցում.

զ) չհայտարարագրված համակենտրոնացման իրավախախտման հատկանիշների հստակեցում.

է) տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթների քննարկման ընթացակարգի հստակեցում.

ը) տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման մերժման հիմքերի հստակեցում.

թ) սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողովին ոչ հավաստի, կեղծ, ապակողմնորոշիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ներկայացվելու համար պատասխանատվության միջոց կիրառելու լիազորության սահմանում:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ քաղաքականություն մշակվում և իրականացվում է նախարարությունների կողմից, հետևաբար Կառավարությանը որպես պետական օժանդակություն տրամադրող մարմին դիտարկելը հիմնավորված չէ: Նման պայմաններում հստակեցվել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետը կարգավորումը և հստակեցվել է քաղաքականություն մշակող նախարարությունների կողմից Կառավարությանը օժանդակություն տրամադրելու վերաբերյալ նախագիծ ներկայացնելու դեպքում վերջիններիս պետական օժանդակություն տրամադրող մարմին դիտարկվելու հանգամանքը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով.

1) սահմանվում է Հանձնաժողովի լիազորությունը որպես սպառողների պաշտպանության կենտրոնական և կոնտակտային հիմնական մարմին.

2) սահմանվում է սպառողների դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ հստակ կարգավորումներ՝ ներառյալ սպառողների դեմ անարդար առևտրային գործելակերպի ընդհանուր բնութագիրն ու դրա առավել կանխատեսելի դրսևորումները.

3) նախատեսվել են սպառողների դեմ ուղղված իրավախախտումների առնչությամբ վարույթների հարուցման առիթների քննարկման և վարույթների քննության առանձնահատկությունները.

4) նախատեսվել է Հանձնաժողովի կողմից միջանկյալ միջոցներ կիրառելու հնարավորություն և միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշման ընդունման առանձնահատկություններ.

5) սահմանվել է պատասխանատվություն սպառողների դեմ ուղղված իրավախախտումների համար.

6) նախատեսվել է գյուղատնտեսական արտադրանք ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարման կետանցի դեպքում բազային տոկոսներ վճարելու պարտականություն:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով.

1) ամրագրվել է սպառողների իրավունքների պաշտպանության շրջանակում հիմնարար նշանակություն ունեցող սպառողի ազատ ընտրության իրավունքը.

2) սահմանվել են մի շարք հիմնարար նշանակություն ունեցող հասկացություններ, այդ թվում՝ «միջին սպառող», «ապրանք», «սպառողի նկատմամբ տնտեսավարող սուբյեկտի առևտրային գործելակերպ», «սպառողի տնտեսական վարքագծի վրա ազդեցություն», «վարքագծի կանոնագիրք», «առևտրային հաղորդակցություն», «ձեռքբերման վերաբերյալ որոշում» և այլ հասկացություններ:

2) նախատեսվել է սպառողների դեմ տնտեսավարող սուբյեկտների անարդար առևտրային գործելակերպի վերաբերյալ ամբողջական կարգավորումներ՝ 2005/29/EC հրահանգով սահմանված կարգավորումներին համապատասխան, ներառյալ՝ անարդար առևտրային գործելակերպից սպառողների պաշտպանության մեխանիզմներ: Մասնավորապես՝

ա) նախատեսվել է տնտեսավարող սուբյեկտի կողմից սպառողի նկատմամբ անարդար առևտրային գործելակերպ դրսևորելու արգելքի սկզբունքը,

բ) սահմանվել են անարդար առևտրային գործելակերպ համարվող վարքագծի հատկանիշները,

գ) սահմանվել են տնտեսավարող սուբյեկտների այն վարքագիծը, գործողություններն ու անգործությունը, որոնք բոլոր դեպքերում համարվում են անարդար:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով.

1) Տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված է վաճառվող ապրանքի համար բնորոշ մեկ միավորի գնի ցուցադրման պարտադիր պահանջ, ինչպես նաև կարգավորումներ փաթեթավորմամբ վաճառվող ապրանքների դեպքում ապրանքի գնի հետ միասին նաև փաթեթվածքի մեջ առկա ապրանքի մեկ միավորի գնի ցուցադրման վերաբերյալ.

2) սահմանվել են կարգավորումներ ակցիաների վերաբերյալ գործող կարգավորումների կատարելագործման ուղղությամբ, այդ թվում՝ սահմանվել է պրոգրեսիվ զեղչի հասկացությունը:

Նշված կարգավորումները արտացոլում են 98/6/EC հրահանգով սահմանված պահանջների սկզբունքները, ինչպես նաև մի շարք պետություններում, այդ թվում՝ Ֆինլանդիայում, Իռլանդիայում գործող կարգավորումները:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագծերը մշակվել են էկոնոմիկայի նախարարության և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման դեպքում ակնկալվում է ստեղծել սպառողների շահերի պաշտպանության արդյունավետ գործող համակարգ և բարեխիղճ մրցակցության ու ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայր:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:

Նախագծերի ընդունումը բխում է ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (CEPA), Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» թիվ 666–Լ որոշումից, Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» թիվ 1363-Ա որոշումից: